

# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության  
Վարչություն ՀԱՎԵԼՎԱԾ G. Տրանսպորտային Շքերթների Արձանագրություն

## Վերջին թարմացումները՝

9/4/20 Մեքենաներով շքերթները կարող են նաև կիրառվել ոչ բարեգործական միջոցառումների ժամանակ: Փաթեթավորված քաղցրավենիքներ և նախապես փաթեթավորված ոչ շուտ փչացող մթերքներ կարող են բաժանվել՝ որպես հյուրասիրության մաս կազմող փաթեթներ:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը ձեռք է բերում գիտական և հանրային առողջության փորձի վրա հիմնված փուլային մոտեցում՝ թույլ տալու մարդկանց կրկին սկսելու օգտվել հանրային վայրերից այնպիսի եղանակներով, որոնք կսահմանափակեն COVID-19-ով վարակվելու վտանգը: Անհատներին, ձեռքբերումները մեծաբելու կամ միջոցառումներին մասնակցելու համար Վարչաշրջանն այժմ թույլ է տալիս ավտոմեքենաներով շքերթները կամ ավտոմեքենաների միջից մասնակցությամբ միջոցառումները: COVID-19-ի համավարակի ընթացքում խիստ կարևոր է, որ ավտոմեքենաներով շքերթի կամ ավտոմեքենաների միջից մասնակցությամբ միջոցառման կազմակերպիչը (Հյուրընկալը) և բոլոր մասնակիցները հետևեն և ենթարկվեն Հանրային Առողջապահության հետևյալ պահանջներին՝ COVID-19-ով վարակվելու վտանգը ցածր պահելու համար:

## Ավտոմեքենաներով շքերթները կամ ավտոմեքենաների միջից մասնակցությամբ միջոցառումները պետք է բավարարեն հետևյալ արձանագրությունների պահանջներին.

1. Ավտոմեքենաներով շքերթները կամ ավտոմեքենաների միջից մասնակցությամբ միջոցառումները պետք է ունենան նշանակված կազմակերպիչ (Հյուրընկալ), ով պատասխանատու է ապահովելու, որ միջոցառման ընթացքը համապատասխանի սույն Արձանագրության պահանջներին:
  - a. Ավտոմեքենաներով շքերթը միջոցառում է, որի ամբողջ ընթացքում յուրաքանչյուր մասնակից, բացառությամբ՝ Հյուրընկալից, աշխատակազմից և անվտանգության ծառայողներից, բացի ստորև հատուկ նշված բացառություններից, մնում է ամբողջովին փակ ավտոմեքենայի մեջ՝ ամրագոտին ամրացված վիճակում, և յուրաքանչյուր փակ ավտոմեքենայում գտնվող բոլոր անձիք պետք է նույն ընտանիքի անդամներ լինեն: Հստակեցնենք, որ փակ ավտոմեքենաների մեջ չեն ներառվում մոտոցիկլետները, տանիքը բաց ավտոմեքենաները, առանց դռների ավտոմեքենաները կամ հեծանիվները:
  - b. Ավտոմեքենաներով շքերթը պետք է ունենա նշանակված կազմակերպիչ (Հյուրընկալ), ով պատասխանատու է միջոցառման ընթացքում սույն Արձանագրության համապատասխանությունն ապահովելու համար (Հյուրընկալ): Կարող են ներկա լինել կազմակերպության անձնակազմի միայն այն անդամները, ովքեր անհրաժեշտ են շքերթը/մեքենաների միջից միջոցառումը վարելու և սույն Հրամանի պահանջների բավարարումն ապահովելու համար (“Անձնակազմ”):



# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության  
Վարչություն ՀԱՎԵԼՎԱԾ G. Տրանսպորտային Շքերթների Արձանագրություն

- c. Հյուրընկալը պետք է ապահովի, որ մասնակիցները, անձնակազմը և անվտանգության աշխատակիցները պահպանեն դեմքը ծածկելու և սոցիալական (ֆիզիկական) հեռավորության պահպանման պահանջները:
  - d. Հյուրընկալը պատասխանատու է ավտոմեքենայով շքերթ միջոցառումը կազմակերպել այնպես, որ այն համապատասխանի բոլոր հրամանագրերի, թույլատրվող պահանջներին, երթևեկության վերահսկման պահանջներին, ինչպես նաև քաղաքի կամ այլ վայրի օրենքներին, որտեղ անցկացվում է միջոցառումը:
2. 20-ից ավելի ավտոմեքենաներով միջոցառման դեպքում, Հյուրընկալը պետք է իր սեփական միջոցներով կազմակերպի և տրամադրի բավարար թվով անվտանգության ծառայողներ, որպեսզի ապահովի Հրամանի պահանջներին բավարարելը և լուծի երթևեկության և անվտանգության հետ կապված ցանկացած խնդիր: Անվտանգության ծառայողների անհրաժեշտ թիվը պետք է սահմանվի անվտանգությունը տրամադրող հաստատության կողմից, բայց պետք է լինի ոչ ավելին, քան անհրաժեշտ է համարվում անվտանգությունը պահպանելու և Հրամանին համապատասխանությունը ապահովելու համար: Հյուրընկալը կարող է պայմանավորվել տեղական իրավապահ գործակալության հետ (“Գործակալություն”), որն առաջնային իրավասություն ունի տվյալ իրադարձության գտնվելու վայրի նկատմամբ՝ տրամադրելու անվտանգություն և վճարել Գործակալության կողմից սահմանված համապատասխան ծախսերը:
3. Հյուրընկալը պետք է մշակի շքերթի կամ մեքենաների միջից անցկացվող միջոցառման ծրագիրը, որը ներառում է ստորև բերված Միջոցառման Ծրագիր բաժնում նշված բոլոր տարրերը: Հյուրընկալը պետք է խորհրդակցի քաղաքային և տեղական իրավապահ մարմինների հետ՝ նախքան միջոցառման ծրագիրը կազմելը:
  4. Կազմակերպության միայն այն անձնակազմը, ովքեր անհրաժեշտ է օժանդակեն Հյուրընկալին ավտոմեքենաներով շքերթի ժամանակ օգնելու համար, կարող են գտնվել իրենց ավտոմեքենաներից դուրս, բացառությամբ՝ ստորև նշված դեպքերի: Հյուրընկալին օգնող բոլոր աշխատակիցները, ինչպես նաև Հյուրընկալը պետք է կրեն դեմքի կտորե ծածկող միջոցներ, երբ շփվում են ուրիշների հետ:
  5. Մասնակցող ավտոմեքենաները չեն կարող գերազանցել ուղևորների սահմանված առավելագույն թիվը:
  6. Մեքենաներով շքերթը պետք է ընթանա միայն հրավերով և մասնակցող ավտոմեքենաների թիվը պետք է սահմանափակվի համապատասխան տվյալ վայրի հնարավորությունների՝ ինչպես հաստատված է տեղական իրավասության կամ տեղական իրավապահ մարմինների կողմից:
  7. Մեքենաներով շքերթը պետք է տեղի ունենա բավականաչափ մեծ բացօթյա վայրում, որպեսզի հրավիրված մեքենաները կարողանան կանգնել որպես միջոցառման մաս: Մեքենաների միջև հեռավորությունը պետք է բավարար լինի՝ արտակարգ իրավիճակներում թույլ տալու մուտքն ու ելքը:



# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության  
Վարչություն ՀԱՎԵԼՎԱԾ G. Տրանսպորտային Շքերթների Արձանագրություն

8. Եթե միջոցառման վայրը Հյուրընկալի սեփականությունը չէ, Հյուրընկալը պետք է սեփականատիրոջը տրամադրի Միջոցառման նախագծի պատճեն և տվյալ վայրը օգտագործելու գրավոր թույլտվություն կամ համաձայնագիր, որը հաստատում է, Միջոցառման ծրագրի ստանալը:
9. Ավտոմեքենայի ուղևորները պետք է նույն ընտանիքի անդամներ կամ նույն հասցեի բնակիչներ լինեն: Շքերթի ժամանակ մասնակիցները չեն կարող մեքենաները փոխել:
10. Եթե ավտոմեքենայի որևէ պատուհան բաց է, ուղևորները պետք է դեմքը ծածկող միջոց կրեն, երբ նրանց մոտենան միջոցառման կազմակերպիչները, անվտանգության անձնակազմը կամ Հյուրընկալը:
11. Հյուրընկալը կարող է ավտոմեքենայով շքերթի մասնակից ամեն մի անդամին հերթով փաստաթուղթ կամ իր տրամադրել, կամ իրականացնել բարեգործական նվիրատվություններ , բայց դա պետք է անի՝ պահպանելով դեմքը ծածկելու պահանջները: Հերթով՝ յուրաքանչյուր ավտոմեքենայից մեկ անձ, Հյուրընկալի կողմից թույլատրված կարգով և հետևելով դեմքը ծածկելու պահանջներին, կարող է դուրս գալ ավտոմեքենայից, որպեսզի ստանա կամ վերցնի իրեր կամ բարեգործական նվիրատվություններ :
12. Մասնակցող ավտոմեքենայի ուղևորները չեն կարող լքել իրենց ավտոմեքենաները, բացառությամբ՝ արտակարգ իրավիճակների, պետքարաններից օգտվելու նպատակով կամ, ինչպես թույլատրված է Հյուրընկալի կողմից՝ ամեն ավտոմեքենան առանձին-առանձին, կարճ ժամանակահատվածով՝ (իրեր իջեցնելու կամ վերցնելու կամ դիպլոմ վերցնելու նպատակով): Ավտոմեքենայից դուրս գտնվելու ժամանակ, մասնակիցները պետք է դեմքի կտորե ծածկող միջոց կրեն և հնարավորինս հեռու մնան Հյուրընկալից և նրա աշխատակազմից:
13. Եթե միջոցառման Հյուրընկալը միջոցառման ընթացքում թույլ է տալիս պետքարաններից օգտվել, ապա դրանք պետք է Հյուրընկալի կամ Անձնակազմի կողմից կանոնավոր կերպով մաքրվեն: Պետքարաններից օգտվելու հերթերի գոյացման բոլոր վայրերում պետք է նշումներ արվեն՝ ցույց տալու համապատասխան ֆիզիկական հեռավորությունը: Շարքում սպասել պետք է թույլատրվի առավելագույնը 5 հոգու:
14. Ավտոմեքենաների ուղևորների կողմից բերված ցանկացած իր կամ սննդի և խմիչքի հետ կապված աղբ պետք է մնա ավտոմեքենայի մեջ: Շքերթի ժամանակ չի թույլատրվում որևէ ապրանքների կամ սննդամթերքի վաճառք: Փաթեթավորված քաղցրավենիքներ և նախապես փաթեթավորված ոչ շուտ փչացող մթերքներ կարող են բաժանվել՝ որպես հյուրասիրության մաս կազմող փաթեթներ:

## ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐ.

1. Միջոցառման ծրագիրը պետք է մշակվի հյուրընկալի կողմից նախքան մարդկանց հրավիրելը՝ մասնակցելու ավտոմեքենաներով շքերթին:

# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության  
Վարչություն ՀԱՎԵԼՎԱԾ G. Տրանսպորտային Շքերթների Արձանագրություն

2. Միջոցառման ծրագիրը պետք է նաև նախապես ներկայացվի յուրաքանչյուր հրավիրվածի և տեղական իրավասությանը, եթե այդ իրավասությունը ունի թույլտվության գործընթաց:
3. Միջոցառման ծրագիրը պետք է նաև փակցված լինի հավաքի վայրում ակնհայտ տեղում և ներառի հետևյալը, եթե կիրառելի է.
  - a. Հյուրընկալի կոնտակտային տվյալները, ներառյալ՝ բջջային հեռախոսի համարը և էլեկտրոնային հասցեն:
  - b. Միջոցառումը վարելու համար անհրաժեշտ անձնակազմի ընդհանուր թիվը:
  - c. Մասնակցող ավտոմեքենաների նախատեսվող քանակը և միջոցառման տևողությունը, ինչպես հաստատվել է տեղական իրավասու մարմինների կողմից:
  - d. Ինչպես պետք է ավտոմեքենաները շարվեն՝ միջոցառման համար նախատեսված տարածք մուտք գործելու համար:
  - e. Ինչպե՞ս տրանսպորտային միջոցների դասավորությունը հնարավորություն կտա բավարար տարածք ունենալ՝ թույլ տալու արտակարգ իրավիճակում ավտոմեքենաներից մուտքն ու ելքը:
  - f. Ինչպես են Հյուրընկալ, Անձնակազմը և անվտանգության ծառայողները հետևելու, որպեսզի միջոցառման ընթացքում միայն մեկ մեքենայի ուղևորների միաժամանակ թույլատրվի դուրս գալ իրենց ավտոմեքենայից (բացառությամբ պետքարանից օգտվելու համար և արտակարգ իրավիճակներում):
  - g. Եթե կիրառելի է, ինչպես են Հյուրընկալը կամ Անձնակազմը հետևելու պետքարանների հերթերը, որպեսզի ապահովեն, Սոցիալական հեռավորության պահպանման պահանջները և ոչ ավելի, քան հինգ մարդ են սպասում հերթում:
  - h. Եթե կիրառելի է, ինչպես են Հյուրընկալն ու Անձնակազմը ապահովելու, որ պետքարաններն ախտահանվեն օգտագործումների միջև:
  - i. Անվտանգության ընկերության անվանումը (կամ, եթե Հյուրընկալն արդեն ունի անվտանգության աշխատակիցներ, այն կարող է օգտագործել իր ունեցած անվտանգության ծառայողներին և ներկայացնել այդ աշխատակիցների տվյալները) կամ Գործակալությանը, որքան է անվտանգության աշխատակիցների թիվը և ինչպես է անվտանգությունը ապահովելու այս Հրամանի պահանջների բավարարումը:

## Իմացեք, որտեղից ձեռք բերել հուսալի տեղեկություններ

- Զգուշացեք խարդախություններից, կեղծ լուրերից և նոր կորոնավիրուսը շրջապատող կեղծիքներից: Ճշգրիտ տեղեկատվությունը, ներառյալ՝ Լոս Անջելեսում նոր դեպքերի մասին հայտարարությունները, միշտ տարածվելու է Հանրային առողջապահության կողմից մամուլի հաղորդագրությունների, սոցիալական լրատվամիջոցների և մեր կայքի միջոցով: Կայքում ավելի շատ տեղեկություններ կան COVID-19-ի վերաբերյալ, ներառյալ ՀՏՀ, ինֆոգրաֆիկա և լարվածությունը (stress) հաղթահարելու ուղեցույցը, ինչպես նաև խորհուրդներ ձեռքերի լվացման վերաբերյալ:



# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն ՀԱՎԵԼՎԱԾ G. Տրանսպորտային Շքերթների Արձանագրություն

- Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն (LACDPH, Շրջան)
  - <http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/>
  - Սոցիալական կայք. @lapublichealth

Նոր կորոնավիրուսի վերաբերյալ տեղեկատվության այլ հուսալի աղբյուրներն են.

- Կալիֆոռնիայի Հանրային Առողջապահության Վարչություն (CDPH, Նահանգային)
  - <https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/Immunization/nCOV2019.aspx>
- Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ (CDC, Ազգային)
  - <http://www.cdc.gov/coronavirus/novel-coronavirus-2019.html>

Եթե դուք հարցեր ունեք և ցանկանում եք խոսել որրևէ մեկի հետ, զանգահարեք, Լոս Անջելես Շրջանի Տեղեկատվական գիծ 2-1-1 հեռախոսահամարով, որն աշխատում է օրը 24 ժամ:

